

**ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ**

**Ս. Ա. ԴԻԼԲԱՆԴՅԱՆԻ «ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ  
ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ  
ՎԱՐՈՒՅԹՈՒՄ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**Դավիթ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

**Ե**ՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր Սամվել Աղվանի Դիլբանդյանի՝ «Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում» մենագրությունը այս ոլորտին վերաբերող առաջին համալիր և ամբողջական ուսումնասիրությունն է, որի շրջանակներում վեր են հանվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթի շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության առնչության առկա խնդիրները և առաջարկվել դրանց լուծման գործնական ուղիներ:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների հիմնական նպատակը «մարդակենտրոն» քրեական դատավարության հիմնումն է, որին հասնելու հիմնական նախապայմանը արդարադատության համակարգի վերակառուցումն է: Այսինքն, արդարությունը դառնում է քրեական դատավարության արդյունավետությունը որոշող գլխավոր չափանիշը: Քրեական դատավա-

րության օրենսգրքի ընդունումից մինչ օրս ընթացող դատաիրավական բարեփոխումների համակարգային վերլուծությունը ցույց տվեց, որ դրա ամբողջական և արդյունավետ իրականացմանը խոչընդոտող խնդիրների հիմնական մասը հետևանք է օրենսդրական նորամուծությունների նկատմամբ իրավակիրառողների ոչ միանշանակ վարքագծի, քանի որ վերջիններս ոչ միշտ են պատրաստ ընդունելու նոր իրողությունը և դրանց օրենսդրական արձագանքը:

Իրավակիրառողի այս վերաբերմունքը հաճախ հետևանք է նաև այն հստակ չափանիշների բացակայության, որոնք կկանխորոշեն քրեադատավարական ոլորտի բարեփոխումների ուղղվածությունը:

Ներկայացվող մենագրությունն այն հիմնարար հետազոտությունն է, որն անհրաժեշտ տեսական հիմք կստեղծի՝ ուղղված մարդասիրական գաղափարների մշակմանը, իսկ վերջնարդյունքում՝ քրեական դատավարությունում հումանիստական գաղափարախոսության ստեղծմանը: Հետազոտությունն արժևորվում է նաև նրանով, որ հեղինակն անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի մշակմանը և առանձին կառուցակարգեր ներդնելու առաջարկներ ներկայացրել:

Հեղինակի համար մնան հետազոտության նախադրյալ է ծառայել վերոնշյալ

### **ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ**

խնդիրները դոկտորինային և կիրառական մակարդակներով լուծելու անհրաժեշտությունը, այսինքն՝ ինչպես տեսության, այնպես էլ անմիջական իրավակիրառության մակարդակներում: Հենց դրա անհրաժեշտությունն էլ կանխանշում է վերոնշյալ հիմնախնդիրների հետազոտության արդիականությունը:

Մենագրության մեջ հեղինակի կողմից ներկայացվել են արժեքավոր առաջարկներ՝ ուղղված ինչպես օրենսդրության, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի կատարելագործմանը: Կարևոր է հեղինակի առաջարկությունը՝ օրենքում մատնանշելու, որ քրեական դատավարությունում ապահովվում են լոկ օրինական շահերը, այսինքն՝ նրանք, որոնք համապատասխանում են օրենքում հռչակված իրավունքներին: Հեղինակի այն առաջարկությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում անձի իրավունքների ու օրինական շահերի ապահովմանը ծառայող ինստիտուտները չկրեն դեկլարատիվ բնույթ, անհրաժեշտ է, որ դրանք կազմեն միասնական համակարգ, քանի որ միասնությունը դրանց ապահովման ամենակարևոր նախադրյալներից է: Ընդ որում, օրինական շահերի իրացման միջոցով իրացվում են նաև քրեադատավարական օրենսդրությունում հռչակված իրավունքները:

Հեղինակն իրավացիորեն նշում է, որ իրավունքներն ու օրինական շահերն ապահովել հնարավոր է միայն մասնավոր և հանրային հիմքերի միջև հավասարակշռություն պահպանելու դեպքում: Քանի որ, մի կողմից, քրեական դատավարությունում պետք է լինեն պետության և հասարակության շահերն ապահովող ընթացակարգեր և ինստիտուտներ, մյուս

կողմից պետք է ապահովվեն յուրաքանչյուր առանձին անձի իրավունքներն ու օրինական շահերը: Այդպիսի հավասարակշռումը հնարավորություն կտա կանխելու իրավապահպան մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կանայականությունները և ապահովելու անհրաժեշտ պայմաններ մրցակցության սկզբունքն իրացնելու համար: Ըստ հեղինակի, այնպիսի հավասարակշռման առկայությունը, որտեղ ոչ հանրային, ոչ էլ մասնավոր հիմքերը չեն դիտվում որպես գերակա, հիմնական, թույլ չի տալիս որպես քրեական դատավարության սկզբունք առանձնացնել հանրայնության սկզբունքը: Այն չի կարող ընկած լինել նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումների հիմքում:

Մենագրության շրջանակներում հեղինակն արդարացիորեն քննարկման առարկա է դարձրել նաև դատավարական ձևի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքի պահպանման և կատարելագործման հիմնախնդիրները: Կատարված վերլուծության հիման վրա հեղինակն իրավացիորեն նշում է, որ քրեական դատավարության օրենսգրքում չպետք է թվարկվեն օրենքի էական խախտումները, որոնք կարող են հանգեցնել դատավճիռը փոխելուն: Դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինքը պետք է որոշի այն հարցը, թե արդյոք կոնկրետ խախտումը բավարար է կայացված դատավճիռի փոփոխման կամ բեկանման համար:

Հեղինակն իրավացիորեն նշում է, որ քրեադատավարական ձևի միասնությունը չի բացառում դրա տարբերակվածությունը: Դա պայմանավորված է նրանով, որ քրեական գործերի առանձին կատեգորիաներ, ելնելով դրանց առանձնահատկություններից, պահանջում են բարդացնել կամ, հակառակը, պարզեցնել դատավարական ընթացակարգը: Դա կարող է անհրաժեշտ լինել ինչպես նախնական կամ

դատական քննության օպտիմալացման, այնպես էլ քրական դատավարությանը մասնակցող առանձին կատեգորիայի անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Չեղինակը մանրամասն քննարկման առարկա է դարձրել նաև քրեական գործի հարուցման փուլի նպատակահարմարության հարցը: Թեև ընդհանուր առմամբ հեղինակը կասկածի տակ է դնում այս փուլի առկայության նպատակահարմարությունը, սակայն գործող քրեական դատավարության օրենսգրքի պարագայում առաջարկում է այս փուլում մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորող արժեքավոր առաջարկներ:

Քրեական դատավարության սուբյեկտների իրավունքների վերլուծության հիման վրա հեղինակը նշում է, որ նախնական քննության ընթացքում փաստարկներով զինվում է քրեական դատավարության միայն մի կողմը՝ մեղադրանքի կողմը: Մյուս կողմը զրկված չէ իրավունքներից և նույնպես կարող է մասնակցել ոչ միայն իր ապացուցողական բազայի ձևավորմանը, այլև հնարավորություն ունի ծանոթանալու հավաքվող ապացույցներին և քննադատել

դրանք ինչպես նախնական քննության փուլում, այնպես էլ հետագայում՝ դատական քննության ժամանակ: Բացի այդ, այն օժտված է իրավունքներով, որոնց օգնությամբ կարող է պաշտպանել իր շահերը քրեական դատավարության տվյալ փուլում: Ընդ որում, նախնական քննության անցկացման ձևն ինքնին ենթադրում է ոչ միայն տուժողների, այլև պաշտպանության կողմի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Ըստ հեղինակի, նախնական քննության փուլում պաշտպանի իրավունքների ընդլայնումը քննիչի կամայականություններից պաշտպանվելու երաշխիք է: Դա բարենպաստ պայմաններ է ստեղծում՝ խուսափելու մեղադրական ուղղվածությունից: Պաշտպանի ակտիվությունը օրենքով իրեն տրված իրավունքները կիրառելիս թույլ է տալիս ավելի արդյունավետորեն պաշտպանել կասկածյալների, մեղադրյալների իրավունքներն ու օրինական շահերը:

Մենագրությունն իր տեսական հիմքով և պրակտիկ նշանակությամբ օգտակար կլինի ինչպես քրեական դատավարության գիտությամբ զբաղվողների, այնպես էլ ոլորտի պրակտիկ աշխատողների համար: